

ՍԵՐԳԵՅ ՄԿՐՏՉՅԱՆ

333
ԱՍՈՒՅԹ



ԳՐԱԿԱՆ ԷՏԱԼՈՆ

ԵՐԵՎԱՆ
2010

ՀՏԴ- 891.981 Մկրտչյան
ԳՄԴ- 84 Հ
Մ 806

Խմբագիր՝ Շանթ Մկրտչյան

Մկրտչյան Սերգեյ
Մ 806 333 ասույթ / Սերգեյ Մկրտչյան, Խմբ.՝ Շանթ Մկրտչյան.
- Եր.: Գրական էտալոն, 2010. - 72 էջ

Գրքում ամփոփված է 80-ականների սկզբից մինչև այսօր Սերգեյ Մկրտչյանի հեղինակած ասույթներից ընտրված ձիշտ 333 «ծաղիկ» կազմող փունջը: Մի շարք ասույթներ ժամանակին հրապարակվել են մամուլում:

ՀՏԴ- 891.981 Մկրտչյան
ԳՄԴ- 84 Հ

ISBN 978-9939-9037-1-2

© Սերգեյ Մկրտչյան, 2010 թ.

ՆԱԽԱԲԱՆ

Ասույթը մարդկային մտքի փայլատակման պահն է, որը կայծակի պես լուսավորում է գիտակցության ողջ տարածքը, առաջացնելով յուրօրինակ «էլեկտրական պարպում»՝ թարմացնելով և մաքրագործելով մարդկային միտքը՝ ստիպելով նրան մեկ անգամ ևս կենտրոնանալ և խորհրդածել տվյալ հարցի շուրջը, նրա ճշմարտության աստիճանը որոշելով սեփական հոգևոր փորձի միջոցով: Բայց այդ «փայլատակման պահին» նախորդում է լարված մտավոր աշխատանք և մեծ կենսափորձ, սառցաբեկորի չերևացող մասը հանդարտ լողում է ջրերի տակ՝ արտաքին հայացքի համար մնալով անտեսանելի: «Եթե ինքդ քեզ տեսնես՝ Աստծուն կտեսնես» - գրում է Սերգեյ Մկրտչյանը: Այս «թեթև» դատողության տակ թաքնված է մի ողջ աշխարհ, որի վերլուծությունը մեզ կհասցնի մտքի և ճանաչողության ամենատարբեր վայրերն ու ոլորտները՝ ցույց տալով, որ մարդու ներքին էության մեջ գործող աներևույթ Ուժը ոչ այլ ինչ է՝ եթե ոչ Աստծու ներկայություն: Նրա «էներգիան» և արտաքին դիմակի մեջ շողարձակող նրա մի ճառագայթը, հետևաբար՝ Աստծուն տեսնելու համար պետք է նախևառաջ տեսնել սեփական ներաշխարհը: Սա չի նշա-

Նակում, որ մարդն Աստված է (նման միտքն անթույլատրելի է բոլոր առումներով), բայց հեղինակը մեկ անգամ ևս հիշեցնում է մարդուն, որ նրա մեջ գործում է աստվածային ճառագայթը, այն պետք է տեսնել, ճանաչել և սիրել: «Արդյոք կգամ երբևէ այն օրը, երբ մարդը կտեսնի, որ ինքը մարդ-աստված է: Չգիտեմ»։ Այստեղ «մարդ-աստվածը» սեփական ոգու մեջ աստվածայինը գտած ու ճանաչած մարդն է, որը տարբերվում է մարդու աստվածացման սխալ ու դիվային գաղափարից (անգամ հակադիր է դրան): Կամ «Կամ Աստված, թե՛ չկա, այնքան կարևոր չէ, որքան այն, որ Աստված պետք է լինի»: Որոշ անզգուշությամբ ձևակերպված այս միտքը կարող է հասցնել Վոլտերի այն տեսակետին՝ թե «եթե չկա Աստված, ապա Նրան պետք է ստեղծել», որը Աստծու **գոյաբանական** խնդիրը ծածկում է Նրա **նպատակահարմարության** գաղափարով: Էլ ավելի ինքնատիպ և հետաքրքիր է հեղինակի հետևյալ դատողությունը. «Աստված իմ, շնորհակալ եմ. ինձ տեսողություն ես տվել, որով տեսնում եմ Քո ներկայությունը»:

Մի շարք ասույթներ, իրոք, դիպուկ են, համոզիչ, կենսափորձով արարված. «Ժամանակը սոսկ ամոքում է վերքերը, բայց, ավանդ, երբեք չի ապաքինում», կամ «Աշխարհիս երեսին ամենասարտակեզ բանը մանկան և ծերուկի արտասուքն է»: Ծնունդը և մահը հավասարվում, իմաստաբանական նույն շարքի մեջ են մտնում «արտասուքի» միջոցով, ուր նույնանում են սկիզբը և վերջը (տարբեր դիրքերից, բայց իմաստաբանական նույն հարաբերությամբ): «Եթե «չսիրես» քո սերը՝ կկորցնես այն», - գրում է Ս. Մկրտչյանը: Այո, սերն ինքնին կարող է դառնալ **օրյեկտ**.

սիրել սերը՝ նպաստում է ողջ աշխարհն ընկալել մի որոշակի դիրքից, որը միակ ձշմարիտ զենքն է, քանի որ, ինչպես հայտնի է, «Աստված սեր է»՝ միակ անսպասելի ձշմարտությունը, որը կարելի է գրել Կյանքի գրքի առաջին էջում: Իմաստային այս շարքի հետ է կապված հետևյալ դատողությունը. «Ով բարի չէ՝ նա չի սիրում, ով չի սիրում՝ նա բարի չէ»: Իմաստային նման զուգահեռ-հակադիր կառուցվածքը, ոճական դիսամիկան հատուկ է Ս. Մկրտչյանի ասույթներին (դա բնորոշ է ասույթներին առհասարակ, ինչին հետևողականորեն հետևում է հեղինակը): «Վազելիս այնպես վազիր, ասես քայլում ես, քայլելիս այնպես քայլիր, ասես վազում ես», կամ «Ով տալիս է՝ ստանում է, ով վերցնում է՝ կորցնում է»: Գոյաբանական և բարոյախոսական դատողությունները միաձուլված են միմյանց, մեկը բացահայտվում է մյուսի միջոցով: Նրանց մտային-ոճական հիմքերը **պարադոքսալ** լեզվամտածողությունն է, որով մտքերն ու ասույթները ստանում են նոր ձև ու կերպավորում: Այս ամենին պետք է ավելացնել ասույթների ներքին նպատակադրվածությունը, որն ուղղված է դեպի մարդու կրթա-դաստիարակչական զարգացումը, նրա մտավոր և հոգևոր հարստացումը, որի պահանջը այժմ զգացվում է ավելի քան երբևէ: Սերգեյ Մկրտչյանի «333 ասույթ» ժողովածուն այդ պահանջի պատասխանն է, նրա ներքին թելադրանքը, և ուստի ժամանակակից ընթերցողի համար այն հույժ օգտակար է և կարևոր:

ՇԵՆՐԻԿ ԷՂՈՅԱՆ



Ձայն մեծաց՝ ձայն *Աստուծո*

* * *

Աստված՝ կամենա՛, մենք՝ կարենանք:

* * *

Եթե ինքդ քեզ «տեսնես»՝ Աստծուն կտեսնես...

* * *

Մարդկության բոլոր արարքների ամենաարդար դատավորը Աստված-Բնությունն է, իսկ մարդու արարքներինը՝ հենց ինքը մարդը:

* * *

Երբ մարդը կկարողանա իսկապես սիրել իր մերձավորին, այնժամ կսիրի Աստծուն:

* * *

Քանի դեռ մարդը չի «աստվածանում», ուստի էլ՝ չի տեսնում Աստծուն:

* * *

Աստված արդեն տվել է ամեն ինչ և ամեն բան. մնում է միայն «վայելել» այդ Ամենը:

* * *

Կամ Աստված, թե՛ չկա, այնքան կարևոր չէ, որքան այն, որ Աստված պետք է լինի..., անպայման, ինչպես՝ Արևը, լույսը, «է»-ն...

* * *

Որքան մարդը բանական է, այնքան Աստծո հանդեպ նրա սերն անանձնական՝ նվիրական է:

* * *

Արդյոք կգամ երբևէ այն օրը, երբ մարդը կտեսնի, որ ինքը մարդ-աստված է: Չգիտեմ...

* * *

Մեծ Հավատի «առաջին և մշտական» թշնամին կրոնն է:

* * *

Լուսավորողին լուսավորվող է պետք:

* * *

Տեր իմ Աստված, Դ՛նի գիտես... Հիրավի, միայն Դ՛նի գիտես. ուրիշ ոչ-ոք ոչինչ չգիտի...

* * *

Աստված իմ, շնորհակալ եմ. ինձ տեսողություն ես
տվել, որով տեսնում եմ Քո ներկայությունը:

* * *

Աստված իմ, ես Քո նվիրյալն եմ. ուզում եմ, նաև,
դառնալ Քեզնով լուսավորյալը...

* * *

Ամեն օր՝ արշալույսին, թող, վաղորդայնի լույսով
ցողվի յուրաքանչյուրիս հոգին ու ոգին...

* * *

Ո՛վ, Սուրբ՝ սրբոց մարդկանց, Սրբազան Ազնվությամբ
օծյալ... Դ՛նու, ամենից առավել Ինքնաձաղկող,
Ինքնամաքրող, Ինքնահղկող, Ինքնարարող...
Դ՛նու, Սրբազնագոյնդ՝ անցած-գնացածների,
ներկաների ու... գալիքների մեջ:
Դ՛նու՝ Մեր Գրիգոր Նարեկացի:

* * *

«Կուրծք ծեծողները» միշտ Աստծու անունից են խոսում
միաժամանակ դավաճանելով, ուրանալով Նրան:

* * *

Կոմունիզմը գողացավ Աստծու խոսքերը՝ ուրանալով
Նրան:

* * *

Մարդն ամեն վայրկյան մեղանչում է Աստծո հանդեպ՝
ցինիկաբար, և ամեն վայրկյան իր սերը հայտնում
Նրան՝ երեսպաշտորեն, փոքրոգիորեն:

* * *

Ինչ-որ բան այնպես չի ստեղծել Աստված, քանի որ կան
բաներ, որ անցանկալի են, ուստի՝ դրանք սխալ են...

* * *

Մարդն այնքան կույր էակ է, որ չի տեսնում իր մեջ
բնակվող «աստվածային» էությունը:

* * *

Ինչպիսի ահավոր մեղքեր են գործել մարդիկ կրոնի
պատճառով, հանուն հավատի: Սակայն, կրոնը չէ, որ
«մեղավոր» է:

* * *

Աստված կա, թե՛ ոչ՝ հավերժական խնդիր է մարդու
համար, սակայն ոչ պակաս կարևոր «խնդիրն» այն է,
որ կա կյանք, որը հարկավոր է ապրել՝
«աստվածահաճո» կերպով:

* * *

Դուք ջանք ու եռանդ չեք խնայում իրար խաբելու
համար, և դա ձեզ միշտ հաջողվում է: Սակայն, լսվ
իմացեք, Աստծուն խաբել չեք կարողանա, երբեք:

* * *

Քավարանը ոչ այլ ուր է, քան այս կյանքում, իսկ
դժոխքն ու դրախտը մարդկանց մեջ են:

* * *

Վաղուց-վաղուց ասել են. «Առավրտ լուսոյ, Արեգանկն
արդար:»... Այժմ՝ ավելացնենք. «Արդարեն արդար:
Այժմ, և միշտ, և յավիտեանս...»:

* * *

Յուրաքանչյուրիս համար ջերմեռանդ, սրտառույ,
«առանձնական» աղոթքը մի մեծ, պայծառ անձնական
պատարագ է:

* * *

Դեպ Աստված տանող ճամփան Մասիսով է անցնում:



Տիեզերքը Իսկություն, Առկայություն է, ասել է թե՛ այն, ինչը կա, ինչը «է», սակայն, այդ առկայությունը համր է և կոնյր, այն «կայանում է»՝ հաստատագրվում, միմիայն մարդ-արարածի գիտակցության մեջ: Միայն թե, հարկավոր է լավ պատկերացնել՝ «գիտակցել» այս իրողությունը:

* * *

Օ՛հ, Անսահմանություն, ես պատրաստ եմ գնալ քո Ծիրով ու վերանալ քո բավիղներում խորհրդավոր, քո շավիղներում անեզր...

* * *

Տիեզերքում գոյություն չունի «**Ժամանակ**» երևույթ. կա միայն նյութ-մատերիա և նրա փոփոխություն-զարգացումը: «Ժամանակ» հասկացությունը հորինել է մարդը՝ նյութի՝ «ամեն ինչի», զարգացման ընթացքը «չափելնու», իմաստավորելնու համար:

* * *

Անհնար է որսալ «Ժամանակը», որովհետև Նա իրոք ամենաանորսալի բանն է աշխարհում, քանզի այն իրականում պարզապես գոյություն չունի...

* * *

Եթե մարդկությունը երբևէ կարողանա ձերբագատվել «ժամանակի» սխալ ըմբռնումից և դրանից բխեցնել իր պատկերացումն ու վերաբերմունքը ճշմարիտ իրականության հանդեպ, ապա՝ վիթխարի, հեղաշրջիչ, առաջընթաց ցատկ կկատարի աշխարհագացողության, -տեսողության, -ընկալման, -ըմբռնման և -իմաստավորման գործում, և դրանով իսկ կհասնի իր առաջ ծառացած կարևորագույն պրակտիկ-փիլիսոփայական հիմնախնդիրներից մեկի լուծմանը... և կներդաշնակեցնի իր գոյությունը, իր էությունը տիեզերական օրինաչափություններին...

* * *

Ժամանակն անցնում է..., իսկ մարդկությունը՝ տեղում դոփում շրջապտույտի մեջ:

* * *

Ժամանակը սոսկ ամոքում է վերքերը, բայց, ավանդ, երբեք չի ապաքինում:



Այս աշխարհում **ամենա**արդարը բնությունն է...

* * *

Աշխարհում ամենաարդարը Արեգակն է, մեկ էլ՝ Նրան
արդար Նայողը:

* * *

Աշխարհիս երեսին ամենասրտակեզ բանը մանկան ու
ծերուկի արտասուքն է:

* * *

Ամենակարևոր գիտությունը «ինքնագիտությունն» է:

* * *

Ամենամեծ սխալը՝ կատարած սխալները չչտկելն է:

* * *

Ամենաազատ մարդը գիտունն է, ամենաանկախ
մարդը՝ իմաստունը:

* * *

Ամեն ինչ օրինաչափ է:



Մեծ *ՍԵՐԸ* հասցե չունի:

* * *

Եթե «չսիրես» քո սերը՝ կկորցնես այն:

* * *

Սիրված լինելը հաճույք է, իսկ սիրելը՝ երանություն...

* * *

Սերը նպաստում է համակեցությանը, իսկ փոխըմբռնումը, ասել է, թե՛ «հարգանքը»՝ կյանքին:

* * *

Ով բարի չէ՝ նա չի սիրում, ով չի սիրում՝ նա բարի չէ:

* * *

Ես սիրում եմ սիրողներին, բայց և՛ խղճում չսիրողներին...



Ողջ գոյաշխարհում ամենաթանկ բանը **միտքն** է:

* * *

Միտքը հոգու թևերով է ձախրում:

* * *

Միտքը **խոսք** է ծնում, խոսքը՝ միտք է բեղմնավորում...

* * *

խոսք կա՝ հունչ է
խոսք կա՝ մունջ է:

* * *

խոսքը հնչեցված միտքն է, իսկ **գործը** արդյունավորված խոսքը: **Միտքը, խոսքը** և **գործը** պետք է կազմեն մի անքակտելի շղթա... Եվ քանի դեռ մարդկությունը չի կարողանում կամ «չի ուզում» կազմել այն, ուրեմն՝ ոչ մի բան դուրս չի գա, չի հաստատվի և ոչ մի արդարություն, առաջընթաց...

* * *

Միտքն ու ոգին մեն միակ էության զույգ թևերն են:

* * *

Միտքը մարդուն հղկում է, իսկ ոգին՝ կոփում:

* * *

Մարդու միտքը հոգուց է տկարանում, իսկ հոգին՝
ամլանում մտքից:

* * *

Ոչ միայն՝ մտքի թռիչք, այլ նաև՝ ոգու ճախրամեր...

* * *

Ոգին է մտքի էլիքսիրը՝ կենսատու ավիշը:

* * *

Նախ՝ խելքը, հետո՛ միայն՝ արիությունը:

* * *

Անելն ունայն է՝ լինելն է ամենայն ինչ:

* * *

Միտքը, խոսքը և գործը պետք է կազմեն մի
անբակտելի շղթա... Եվ քանի դեռ մարդկությունը չի
կարողանում, կամ «չի ուզում» կազմել այն, ուրեմն՝ ոչ
մի բան դուրս չի գա, չի՛ հաստատվի և ո՛չ մի
արդարություն, առաջընթաց...

* * *

Խոսքը հնչեցված միտքն է, իսկ գործը՝
արդյունավորված խոսքը:

* * *

Արդար խոսքը հաճախ պարզունակ է թվում:

* * *

Միշտ չէ, որ մեղմ խոսքը բարի է լինում:

* * *

Խոսքը գործի ուրվապատկերն է:

* * *

Լռելը մտքի համբերություն է, իսկ լսելը՝ մտքի
ուշադրություն:

* * *

Մարմնով շուրջ-պար բռնելը հեշտ բան է, իսկ հոգով
ու մտքովը՝ դժվար:

* * *

Իմ կյանքի հիմնարար կարգախոսն է. «Սթափ միտք և
մաքուր խիղճ»: Համենայն դեպս, ես ձգտում եմ
հետևել դրան:

* * *

Ջրույցը մի տաքուկ «ոլորտ» է, ուր ջերմանում է
միտքդ և սփոփվում է հոգիդ:

* * *

Աշխարհում ո՛չ մի հաճույք չի կարող հասնել անկեղծ,
ձշմարիտ զրույցի բերկրանքին:

* * *

Ջրույցը այն տիրույթն է, ուր մարդը ձանաչում է
դիմացինին ու նաև՝ ինքը իրեն, որովհետև տեսնում է
նրա վերաբերմունքն իր նկատմամբ...

* * *

Լեզուն մտքից է կարկամում:

* * *

Լեզուն շատ լավ բան է, բայց՝ ավելի լավ բան է
ականջը:

* * *

Չար լեզուն աղետաբեր երախ է:

* * *

Երբեմն, ասված **թաղը** այնքան չի խոսում, որքան՝
չասվածը:

* * *

Բառը պիտի ձշմարիտ ծնվի:

* * *

Բառը ինքն իրեն պետք է հնչեցնի:

* * *

Դատարկ բառը մահ է, իմաստավոր բառը՝ կյանք:

* * *

Զագրախոսությունը վնասակար աղմուկ է:

* * *

Շատ լսես՝ շատ կասես:

* * *

Խոսելիս ծնվում են բառեր. հաճախ՝ «մկներ», երբեմն՝
«առյուծներ»:



Ճշմարտությունն ամեն ինչ է, մնացյալը՝ ոչինչ:

* * *

Անհնար է ճանաչել ճշմարտությունը. հնարավոր է միմիայն գիտակցել նրա կարևորությունը:

* * *

Ճշմարտության զգացումի բացակայությունը մարդու մեջ ճանապարհ է բացում արատների ու մեղքերի համար:

* * *

Ճշմարտությունն այնքան «մոտիկ» է մեզ, որ անտեսանելի է, սակայն, երբ շատ ենք «հեռանում» նրանից՝ խնդիրն ավելի է բարդանում... և ամենակարևորն այն է, թե այդ ճանապարհին որ «կետում» կկանգնենք:

* * *

Արդարությունը՝ ճշմարտությունը ճանաչելու ժամանակավրեպ փուլ է...

* * *

Ճշմարտությունից խուսափելը մահ է:

* * *

Ճշմարիտ գեղեցկությունը եզերական բան է, իսկ
գեղեցիկ ճշմարտությունը՝ տիեզերական բան:

* * *

Գեղեցիկը ճշմարտի պաճուճանքն է:

* * *

Գեղեցկությունը ճշմարտության ղողանջն է:

* * *

Ճշմարտությունը՝ Է-ությունը, գեղեցկությունից և
արդարությունից անդին է:

* * *

Երբեմն սխալի պատճառը ճշմարտությունը չիմանալն է:

* * *

Կարելի չէ տեսնել ճշմարտությունը կամ լսել. նրան
հնարավոր է միայն ձգտել...

* * *

Որքան շատ փնտրես ճշմարտությունը քեզից դուրս,
այնքան շատ կհեռանաս նրանից:

* * *

Երջանիկ է նա, ով ճանաչում է ձմարտության համի
բերկրանքը:

* * *

Նա ով գեթ մեկ անգամ կձաշակի ձմարտության
«համը», այլևս երբեք չի մոռանա այն...

* * *

Երջանիկ է նա, ով երբևէ գեթ մեկ ակնթարթ որսացել
է ձմարտության լոյսը:

* * *

Ամենայն բան ունայն է, բացի՝ ունայնության
«ձմարտությունից»:

* * *

Ձայնն այնքան ձմարիտ պիտի լինի, որ հնչի իբրև
պատկեր, իսկ պատկերը՝ դառնա տեսանելի ձայն...



Դարձե՛ք **«Իսկական»**, եթե ուզում եք ձմարտանալ,
եթե ուզում եք փրկվել...

* * *

Ի վերջո՝ ինչն է փրկելու աշխարհը՝ գեղեցկությունը,
ինչպես որ ասում են... Միգուցե՝ այո..., ինչ-որ չափով,
ընդամենը: Իսկ ես գիտեմ այն, ինչը լիովին է փրկելու
այս աշխարհը: Դա **«Իսկականությունն»** է:

* * *

Իսկական գոեհկությունն ավելի գեղեցիկ է, քան՝
անիսկական բարեկրթությունը:

* * *

Իսկական սրիկայությունը դժվարությամբ է
բացահայտվում:

* * *

Ակնհայտ սրիկան ավելի արդար է, քան կեղծ
բարեպաշտը:

* * *

Սքողված սրիկայությունը հարկ եղած դեպքում
վերածվում է անսքող լկտիության:

* * *

«Կատարյալը» մարդկային զգացողությունից՝
կարողությունից անդին է և հավերժ կլինի այդպիսինը:



Բանականությունը և ***ինքնագիտակցությունն*** են, որ
ըստ էության գատում են մարդուն կենդանուց...

* * *

Թափանցիիր ինքդ քո էության մեջ՝ և կգտնես քո
Է-ությունը:

* * *

Գիտես քեզ՝ գիտես բոլորին:

* * *

Գոյաշխարհում ամենաարժեքավոր երևույթը
գիտակցությունն է:

* * *

Իմաստուն մարդը միշտ տեսնում է ինքն իրեն,
այսինքն գիտակցում է իր գիտակցելը...

* * *

Նա, ով գիտակցում է իր մարդ լինելը, կբռնի
աստվածանալու ուղին:

* * *

Նա՛մ, ով կկարողանա գիտակցել իր տեղը, իսկույն կգտնի իր տեղը կյանքում:

* * *

Տխմար զգացմունքներն ապականում են բանականությունը:

* * *

Աշխարհը խճողված է «ասուն անասուններով»՝ ի լրումն այլ կենդանիների ու անասունների:

* * *

Մարդը չարիք է գործում, որովհետև բանական արարած է, ավելի ճիշտ՝ «կիսաբանական», իսկ, եթե ավելի խիստ, բայց ստույգ բնորոշելու լինենք, որովհետև՝ «ասուն անասուն» է՝ ընդամենը... որը չի՛ էլ գիտակցում, որ դա, իրոք, այդպես է:

* * *

Տեսնես, ո՞րն է ավելի լավը՝ գիտակցելը, որ զարմանում ես, թե՞ զարմանալը, որ գիտակցում ես...
Դժվար է որոշել, սակայն կարելի է ասել, որ առաջինը *գոյավիճակ* է, իսկ երկրորդը՝ *հոգեվիճակ*, բայց, այս մեկն էլ հեշտ բան չէ...

* * *

Ըմբռնումը՝ իր կոնկրետությամբ հանդերձ, տարիների
ընթացքում հղկվում է, հղկվում... և աննկատելիորեն
վերածվում եթերային ոգեղենության՝
«ոգեկանության»...



Իմաստությունը մեծագույն բերկրանք է:

* * *

Երբ իրար են հանդիպում տաղանդը, փորձն ու
ազնվությունը՝ ծնվում է իմաստությունը:

* * *

Իմաստությունը կայացած, իմաստավորված
փորձառություն է՝ տաղանդով հունցված...

* * *

Մարդկանց համար մեկությունը դժբախտություն է, իսկ
իմաստուն մարդու համար՝ երջանկություն:

* * *

Ոմանք չարիքից դուրս են գալիս հիմարացած, ոմանք
էլ՝ իմաստնացած:

* * *

Իմաստունն ու տխմարը իրար սոսկ մի բանով են
նման. երկուսն էլ սովորելու բան չունեն:

* * *

Եթե կարծում ես, որ հաստատ գիտեն մի բան,
իմացիր՝չգիտեն հաստատ:

* * *

«Ի՛նչն է **գոյություն** իմաստը»,- հավերժորեն հարցնում
է մարդկությունը: Այդ իմաստը, թերևս, հենց ինքը՝
գոյությունը իմաստավորելու մեջ է...



Մարդկության պատմությունը նրա գործած սխալների
արձանագրություն է:

* * *

Եթե մարդկությունը գիտակցեր թե ինչ է անում՝
այդքան բաներ չէր անի:

* * *

Մարդիկ միշտ փնտվում են ներկան և գովերգում են
անցյալը, վասն զի անկարող են իրատեսորեն
գնահատել այդ ներկան և հեշտությամբ «կարողանում
են» գովերգել անցյալը՝ հենց իրենց օրորելով ու
արդարացնելով անցյալում իրենց գործած «սխալները»:
Եվ հենց այսպես էլ ապրում են:

* * *

Մարդկությունը խաղում է իր բախտի հետ:

* * *

Մարդը մահկանացու է, մարդկությունը՝ անմահ:



Քարեհամբույր լինելը հեշտ է, ***բարյացակամ*** լինելը՝
դժվար:

* * *

Բարյացակամ մարդը միշտ չէ, որ բարեհամբույր է
երևում, և միշտ չէ, որ բարեհամբույր մարդը
բարյացակամ է լինում:



Ազատությունն «սկսվում» է մտքից և «ավարտվում»
հոգում:

* * *

Բոլոր տեսակի ազատություններից ամենաբերկրալիս
մտքի ու ոգու ազատությունն է:

* * *

Ազատությունը վիթխարիորեն ավելի մեծ բան է, քան
մեզ թվում է հաճախ:

* * *

Ազատությունը ոգեղեն էություն է:

* * *

Մտավոր ազատությունը ապահովում է հոգևոր
ազատություն...

* * *

Ազատությունը հոգեմտավոր զգայաշխարհ է:

* * *

Ճշմարիտ, իմաստուն մարդն ազատություն չի հայցում,
քանզի նա արդեն իսկ ազատ է...

* * *

Ճշմարտապես ազատ մարդը ցմահ դատապարտված
է... ազատության:

* * *

Ազատամիտ մարդը պարտադիր չէ, որ մտքով ազատ
լինի, քանի որ տարված է Ազատության մտքերով,
մտքով ազատ մարդը նա է, ով տարված է մտքի
ազատությամբ:

* * *

Թվում է, թե ազատությունը հեռու-հեռավոր բան է,
այնինչ այն այնքան մոտ է, որ հաճախ, գրեթե միշտ,
չենք կարողանում տեսնել այն:

* * *

Որքան մարդն ազատությունը փնտրի իրենից դուրս,
այնքան կստրկանա նրա գաղափարին...

* * *

Որքան շատ ձգտես ազատություն ձեռք բերել, այնքան
շատ կկորցնես քեզ «տրված» ազատությունից:

* * *

Տխմարի համար՝ ազատությունը հանցանքներ գործելու
հնարավորություն է:

* * *

Բանականությունն է միայն, որ ի վիճակի է պատռել
անազատության շղթան:

* * *

Ա՛խ, որքան ձիշտ էր ու ազատ՝ իր տակառի մեջ,
Դիոգենեսը...



Օրենքը կանոնակարգված սեր է:

* * *

Օրենքը տիեզերքի արտացոլքն է մարդկանց կյանքում:

* * *

Կա օրենք, որ ի վերուստ է, կա օրենք՝ ներքուստ:

* * *

Օրենքը իրավունքի հայտագիրն է:

* * *

Օրենքը նրանց համար է, ովքեր իրենց մեջ չեն կրում
այն:

* * *

Մարդը պետք է օրենքը կրի իր մեջ, ոչ թե քարշ գա
նրա ետևից:

* * *

Օրինավոր, օրենք ճանաչող մարդը օրենքի կարիք
չունի, անօրեն, օրենք չճանաչողն է, որ կարիքն ունի...

* * *

Ազնիվ, օրինավոր մարդը «կենդանի» օրենսդրություն է՝ քայլող օրենսգիրք:

* * *

Անանձնական սերն, ի վերջո, օրենքի տեսք է ստանում:

* * *

Կան չգրված օրենքներ, որ գրված օրենքներից հազարապատիկ ամուր են:

* * *

Երջանիկ կյանքը կարող է «օրինավոր» լինել, բայց «օրինավոր» կյանքն անպայման չէ, որ երջանիկ լինի:

* * *

Անօրեն մարդը կյանքում օրենքը չի կիրառում, բայց՝ գործի է դնում, իսկ օրինավոր մարդը նրանից երբեք չի օգտվում, քանի որ միշտ օրինավոր կյանքով է ապրում:

* * *

Որտեղ չի գործում օրենքը, այնտեղ գործում են տրամաբանությունը, խիղճն ու ամոթը:

* * *

Հանցագործությունը սկսվում է անպատժելիության
աղբյուրից:

* * *

Օրենքն իրավունքի զավակն է, երբեմն, ավանդ,
անառակացած զավակը:

* * *

Տխմարի համար հանցանք կատարելը ամենահեշտ
գործն է, իսկ առաքինու համար՝ ամենադժվար:

* * *

Հանցավորությունը մորթապաշտության զավակն է:

* * *

Սադրիչը միշտ անպատիժ է մնում...

* * *

Այն ժողովուրդը, որը չի դատում իր դահիճ
«ղեկավարին», արժանի է կառափնարանի:



Մարդ լինելը ամենաբարդ մասնագիտությունն է:

* * *

Մարդը տիեզերքում ընդամենը հյուլն է, սակայն՝
ամենաէական հյուլն է:

* * *

Մարդ կա՝ մարդ է, մարդ էլ կա՝ բնավ...

* * *

Մարդ կա, որ իրեն տիեզերք է երևակայում, մարդ էլ
կա՝ իր մեջ տիեզերք է կրում:

* * *

Ամբողջ տիեզերքը՝ ողջ գոյաշխարհն «անմեղ» է.
մեղավորը միմիայն մարդն է...

* * *

Մարդու որակը ստուգվում է նրա երախտագիտության
աստիճանով:

* * *

Մարդուն «ստուգելու» համար արա՛ նրան՝ հենց իր
ուզած ու իրեն անհրաժեշտ լավությունը և մի կո՛ղմ
քաշվիր ու՝ հանգիստ դիտիր նրան...

* * *

Երախտագետ մարդն արդար է ու անվեհեր:

* * *

Սիրիր քո մեջ մարդը, իսկ մարդու մեջ՝ քեզ:

* * *

Մարդը նա է, ով գիտակցում է իր մարդ լինելը:

* * *

Այն մարդը, որը գիտակցում է իր մարդ լինելը,
կիսաստված է...

* * *

Մարդը մտածելուց հետո մի բան է անում, իսկ
խորհրդածելուց հետո զրոյցի է բռնվում:

* * *

Անարժան մարդը միշտ ակնկալում, ցանկանում է այն,
ինչին արժանի չէ:

* * *

Մարդս պատրաստ է փոխել ամենայն բան, միայն՝ ո՛չ
ինքն իրեն:

* * *

Մարդս միշտ կարևորում է այն, ինչը չունի, և
արհամարհում այն, ինչը ունի:

* * *

Կարգին մարդը միշտ պարզունակ է թվում:

* * *

Մարդը մարդանում է՝ մարդուն ձանաչելով:

* * *

«Մարդկությունը» կրակն է ընկել մարդկանց ձեռքը:

* * *

Իրենց նախադրյալներով մարդիկ իրար մոտավորապես
նման են, իսկ մղումներով՝ խիստ տարբեր:

* * *

Որակյալ մարդը, ծերանալով, մարդանում է, իսկ
անորակը՝ «անասնանում»:

* * *

Քամելեոնը փոփոխական էակ է, իսկ մարդը՝ նրանից
էլ ավելի:

* * *

Կինը, երբ սկսում է «գիտակցել» իր մարդ լինելը՝
սկսում է վայրենանալ, իսկ երբ դեռ չի գիտակցում
այդ՝ մարդ է մնում...

* * *

Ով չի սիրում մարդ-արարածին՝ անարգում է կյանքը:

* * *

Որքան մարդն աստվածացնի որևէ բան կամ որևէ
մեկին, այնքան կհեռանա դրանից, կամ նրանից:

* * *

Որքան քիչ է սխալվում մարդը, այնքան նա մարդ է:

* * *

Մարդն անընդհատ «մեծանում է», բայց, ավանդ, դրա
հետ մեկտեղ մեծանում է նաև նրա գոռոզությունը,
որև, իր հերթին, «փոքրացնում է» նրան...

* * *

Ճշմարիտ մարդու սիրտն այնքան մեծ պիտի լինի, որ
տեղավորի բոլորի վիշտը:

* * *

Որքան առաջադիմում է մարդը գիտությամբ, այնքան՝
հետադիմում է ոգեկանությամբ:

* * *

Մարդ պետք է ո՛չ մի դեպքում չհղետալականացնի
անգամ իր ամենանվիրական իդեալը, եթե ոչ՝ ձեռքից
բաց կթողնի ամենակարևորը՝ Մարդանալու ընթացքը...

* * *

Մարդը՝ իր «սրատեսությամբ» հանդերձ, այս աշխարհի
«ամենակոյր» արարածն է:

* * *

Աչք կա, որ միայն նայում է, աչք էլ կա, որ նաև՝
տեսնում է:

* * *

Մեծ մարդը նա է, ով տեսնում է նախ Աստծո
մեծությունը, հետո նոր՝ «իրենը»:

* * *

Եթե մարդը մինչև վերջ գիտակցի «ի վերուստ իրեն
շնորհված» առաքելությունը, ապա «Երկնային
դրախտը» կիջնի ու կհաստատվի Երկրում...

* * *

Մարդիկ միշտ գովերգում են անցյալը՝ ինչպիսին էլ
այն եղած լինի, և փնտվում են ներկան՝ ինչպիսին էլ
այն լինի:

* * *

Մարդիկ հավատում են այն բաներին, որոնց ի վիճակի
են հավատալու:

* * *

Մարդիկ միշտ սիրում են այն, ինչը հայտնի է իրենց, և
ատում են այն, ինչը իրենց բնավ հայտնի չէ:

* * *

Մարդիկ միշտ փնտվում են ներկան և գովերգում են
անցյալը, վասն զի անկարող են իրատեսորեն
գնահատել այդ ներկան և հեշտությամբ «կարողանում
են» գովերգել անցյալը՝ հենց իրենց օրորելով ու
արդարացնելով անցյալում իրենց գործած «սխալները»:
Եվ «հենց այսպես էլ ապրում են»...

* * *

Ողջ աշխարհի բոլոր մարդիկ՝ թե «մեծ», թե «փոքր»,
իրարու միաժամանակ ինչ-որ բաներ են ասում և ոչ ոք
դիմացինին երբեք չի «լսում», քանզի ոչ կարող են, ոչ
էլ ուզում են: Անգամ Բրիտոսին «չլսեցին» ու
շարունակում են «չլսել», ուր մնաց՝ իրար...

* * *

Մարդկանց նենգությունը անափ օվկեան է, իսկ
առաքինությունը՝ լճակ սահմանափակ...

* * *

Տխուր բան է, երբ քեզ չեն հասկանում, սակայն ավելի
տխուր վիճակ է, երբ դո՛ւ չես հասկանում մարդկանց:

* * *

Ոմանք չեն կարող..., որովհետև չեն պատկերացնում,
ոմանք էլ՝ կարող են..., բայց՝ չեն ուզում...:

* * *

Ա՛յ մարդիկ, այդ ո՛ր եք միշտ վազում. այնտեղ, ախր,
բան չկա: Ավելի լավ չէ՞՝ կանգ առնեք, շունչ քաշեք,
նայեք ձեր շուրջ-բոլորը, հետո՝ քայլեք՝ խոհեմ ու
հանդարտ:

* * *

Երեք բան կա, որոնց համար երջանիկ եմ. նախ, որ մարդ
եմ, այլ ոչ թե՛ կենդանի, երկրորդը՝ տղամարդ եմ, ոչ թե՛
կին, և վերջապես՝ որ հայ եմ, ոչ թե՛ ոչ-հայ:

* * *

Շատ, շատ ձիշտ էր անում Դիոգենեսը, երբ օրը ցերեկով՝
ձրագը ձեռքին *մարդ* էր փնտրում... Իսկ ես, ահա, *մարդ* եմ
փնտրում նաև իմ երազներում՝ լուսավոր...

*

* * *

Մարդիկ, լսե՛ք իրար՝ ականջ դրե՛ք իրար ու ջանացե՛ք
տարբերել, թե՛ ո՛վ ինչ է ասում, և դրանից հետո, միգուցե,
շատ բան ձեր կյանքում կսկսի իր տեղն ընկնել...

* * *

Ա՛յ մարդ, դու՛ արարած, հերի՛ք է անվերջ միայն խոսես լուրջ-
լուրջ *բաների մասին*.
դրա փոխարեն՝ ջանա՛ դառնալ գոնե մի քիչ... *այդպիսին*:

* * *

Մարդկությունն իր գլխավոր քննությունը կրնի հենց
«Հայկական հարցով»...,
իսկ եթե՛ ոչ, ուրեմն կշարունակի դոփել ևույն տեղում ևույն
տեղապտույտի մեջ:

* * *

Մի՞թե Մանր չկա՝ այս մարդաշատ աշխարհում...



Ընկերությունը առաքելություն է՝ հաճելի, բայց և բարդ ու պատասխանատու:

* * *

Ընկերությունը ժայռակ է՝ հավատարմության ու նվիրումի հելուսով հյուսվող:

* * *

Մարդկային հարաբերությունների բազմաբնույթ տեսականու մեջ ամենից շատ գուրգուրանքի է արժանի ընկերությունը, քանի որ այն ամենանուրբն է, որովհետև կառուցվում է անշահախնդրության աղյուսներով:

* * *

Ընկերությունը այն խաղն է, որը կարող է հարստացնել քեզ կամ՝ սևանկացնել:

* * *

Ընկերությունը մի հայելապատ սենյակ է, որի մեջ լավ են երևում յուրաքանչյուր շարժում և ցանկացած կեղծիք:

* * *

Ընկերությունը մոր պես համբերատար է, բայց՝ հոր
պես արդարադատ:

* * *

Իսկական ընկերությունը ամեն մարդու բանը չէ:

* * *

Ընկերությունն այն խաչն է, որին տանելը դժվար է,
բայց՝ բերկրալի:

* * *

Ընկերությունը դժվար ուսումնառություն է և բարդ
քննություն:

* * *

Ընկերության մեջ հեշտ են գլորվում օրերը:

* * *

Ընտրված ընկերությունն անցողիկ է, իսկ ի վերուստ
տրվածը՝ անանց:

* * *

Ոմանց համար ընկերությունը ժամանց է, ոմանց
համար՝ նվիրում անանց:

* * *

Բոլորը ցանկանում են ընկերությունից միայն օգտվել՝
նրան երբեք որևէ բան չտալով: Այդ է պատճառը, որ
աշխարհում իսկական ընկերություն գրեթե չկա: Կան
ընկերություն հիշեցնող ձևական հարաբերություններ:

* * *

Երջանկության մեջ ձեռք բերված ընկերը անցողիկ է,
իսկ դժբախտության մեջ ձեռք բերվածը՝ անանց...

* * *

Ընկերանալը հեշտ է, ընկերություն անելը՝ դժվար:

* * *

«Չեմ հասկանում». այդ ինչո՞ւ «ընկերներս» հիշում եմ
ինձ իրենց վատ օրերին, իսկ իմ վատ օրերին՝ ո՛չ, ու
մեկ էլ, ինձ հիշում եմ իմ լավ օրերին, իսկ իրենց լավ
օրերին՝ դարձյալ, ո՛չ...



Երջանկությունը այն ապրումն է, որն ապրում է մեկ
ակնթարթ:

* * *

Մարդն այնքան ժամանակ չի կարող երջանիկ լինել,
քանի դեռ չի նվաճել դրա իրավունքը:

* * *

Երջանկությունը շանթապայծառ կայծ է, որը ծնվում է
հոգուդ մեջ:

* * *

Դժբախտությունը մարդու գործած չարիքի հունձքն է:

* * *

Բախտը փնտրողին է սիրում:



Այս աշխարհում ամենախսկականը Աստված-բնությունն
է, իսկ կյանքում՝ ՄԱՆՈՒԿԸ:

* * *

Մանկան ԱՄԵՆԻՆՉԸ իսկական է...

* * *

Տարօրինակ է..., բայց միայն մանուկներն են
աշխարհին ձիշտ նայում:

* * *

Հրաշալի կլիներ, եթե ծերուկը հոգով պատանի մնար,
իսկ պատանին էլ մտքով «ծերուկ դառնար»...

* * *

Երեխային պետք չէ՛ պատժել՝ մեզ է պետք պատժել՝
դրա համար:



Ծնվելիս՝ մարդը «հայտնվում է» «անհայտությունից», և մեռնելիս՝ «անհետանում»՝ «անհայտության» մեջ...

* * *

Ծնունդը առաջին քայլն է մահվանը տանող ճանապարհին, իսկ մահը՝ անմահության...

* * *

Միայն **մահն** է «անմահ»:

* * *

Ապրիր այնպես, ասես, անմահ ես, սակայն, նաև մի՛ մոռանա, որ ի վերջո մահկանացու ես...

* * *

Ինչո՞ւ է մարդը լիովին ազնիվ լինում՝ իր և աշխարհի հետ, միմիայն մահվան մահձում... Մի՞թե՞ մահվան պատժի սպառնալիքն է «խոսեցնում» նրան. ո՞ւմ է պետք այդ «ազնվությունը», երբ արդեն շատ ուշ է, ո՞ւշ է՝ այդ ասողի համար: Խեղկատակություն, որի միակ դերակատարը նա է՝ մահամերձը, իսկ հանդիսատեսը՝ նրան շրջապատողները...

* * *

Անհնար է երևակայել, թե որքան սուտ ու փուչ է «այս»
աշխարհը և, ուրեմն, ավանդ, որքան կարևոր է դառնում
«այն» աշխարհը...

* * *

Այս աշխարհն ինչո՞ւ չի կործանվում այսքան մահերից:

* * *

Տեսնես. ո՞վ պիտի վերջ դնի՝ այս մահերին ահավոր:
Էհ...

* * *

Աշխարհի՛ ապրած-գնացած մահերը վիթխարաքանակ
են, բայց կրելիք-գալիք մահերը՝ անհամբերի:

* * *

Ես ողբում եմ... ողբում՝ բոլոր հանգուցյալների մահը:

* * *

Կյանքը, ասում են, ունայն է... սակայն, գոյության
գիտակցումը իմաստալից է:

* * *

Կյանքը սրընթաց ճախրանք է... անհասցե, անուղեկան,
խաբուսիկ, տարօրինակ և..., ավանդ՝ անցողիկ...

* * *

Կյանքը շատ լավն է, եթե ձիշտ ապրես:

* * *

Եթե մեռնելը գալիս է, ուրեմն, գնա՛ մեռի՛ր, իսկ եթե չի
«գալիս»՝ բարի՛ եղիր ապրել:

* * *

Որքան ապրես՝ այնքան դաս կառնես, եթե՝ «սովորես»...

* * *

Կյանքը դիտելու համար նայի՛ր քեզնից դուրս, իսկ
տեսնելու համար՝ «քեզնից ներս»:

* * *

Ամենահաջողակ որսորդը նա է, ում այս կյանքում
վիճակվում է որսալ կյանքի «թռչնի» թևերի
ծափյունը...



Նախ և առաջ՝ **ազգ**, հետո՝ **տոհմ**, այնուհետև՝
ընտանիք և, վերջապես՝ ես:

* * *

Երբ **եղբայրը** դավաճանում է եղբորը՝ ուրանում է
հորը...

* * *

Եթե մարդը բնության արժանի զավակն է, ուրեմն
պետք է փայփայի իր ծնողին:

* * *

Հոր խստությունը դառնահամ նախատիք է թվում,
սակայն, իրականում՝ կենարար օրհնանք է՝
անուշաբույր:

* * *

Եթե **որդիդ** քեզ չի գերազանցել,
ուրեմն՝ իզուր ես հայր դարձել:

* * *

Քրոջ համը կոնկրետ է, եղբոր համը՝ համապարփակ:

* * *

Ասում են՝ «Քույրն ասում է՝ եղբայր ունեմ, եղբայրն
ասում է՝ քույր չունեմ»... տղամարդը նա է, ո՛վ եղծում է
այս «իմաստությունը»:

* * *

Որդին և դուստրը մարդու զույգ ձեռքերն են, բայց
որդին իհարկե աջն է:

* * *

Այրն ու **կինը** դժվարությամբ հունցվող խմոր է...

* * *

Ամեն տեսակի գործ ամուսինների միջև լուծելի է՝
արդար քննարկմամբ, սակայն՝ տղամարդու
կառավարմամբ ու նրա վերջին խոսքով...

* * *

Ասում են. «Տղամարդն ու կինը իրար հասկանում են,
երբ սիրում են միմյանց»: Ուրեմն՝ չեն հասկանում,
որովհետև՝ սերը բանական կատեգորիա չէ:

* * *

Տղամարդը և կինը միշտ չեն «հասկանում» իրար.
տղամարդը՝ որովհետև չի ուզում, իսկ կինը՝ որովհետև
չի կարող:

* * *

Տղամարդը լիարժեք մարդ չէ, էլ ո՛ր մնաց՝ կինը:

* * *

Որքան հեռանա կինը տղամարդուց, այնքան կհեռանա Աստծուց:

* * *

Կինը որքան ժխտի տղամարդուն, այնքան կժխտի ինքն իրեն:

* * *

Կարծում եք՝ եթե կարճացրիք ձեր մազերը, ուրեմն ձեր խելքը երկարե՞ց դրանից:

* * *

Այն կինը, որը չգիտի իր տեղը, կյանքում տեղ չի գտնի:

* * *

Այն կինը, որը նախանձում է տղամարդուն, արդեն կին չէ, այլ՝ ինչ-որ մի անորոշ էակ:

* * *

Կա տղամարդ, որ մի կին չարժե, և կա կին, որ մի քանի տղամարդ արժե, բայց այդ դեպքում ո՛ր մնաց «կինը»...



Կիրքը այն հոգեվիճակն է, որը, եթե հաղթահարես՝
կհաղթանակես...

* * *

Կրքերին տրվելը նույնն է թե՛ փոթորկող օվկիանոսի
մեջ նետվես:

* * *

Կրքերի բոցը այրում, ամայացնում է հոգին ու միտքը...

* * *

Կրքերին մարդիկ հաճույքով են տրվում, քանզի դրանք
քաղցրահամ են, ուստի և չեն զգում դրանց թունավոր
լինելը:

* * *

Կիրքը մարդկային հոգու քուրան է, որի կրակը կարելի
է հանդարտեցնել միայն բանականությամբ
առաջնորդվող խղճով:

* * *

Տարտամ ու անկառավարելի կրքերը հանձարին հրեշ
են դարձնում:

* * *

Խիղճը կրքերի և մտքերի զավակն է:

* * *

Հանձար չթաքցնելը մեծ խիզախություն է, իսկ
թաքցնելը՝ անմտություն:



Խորհուրդ տալը կամ հեշտ է, կամ դժվար,
իսկ խորհուրդ լսելը ոմանց համար միշտ դժվար է...

* * *

Խորհուրդը ոմանց համար արժեք չունի, իսկ ոմանց
համար՝ ամենաթանկ բանն է:



Նպատակին հասնելու համար՝ հաճախակի մոռացիր
նրա մասին:

* * *

Դեպի նպատակ արագ ընթանալը կործանարար է, իսկ
դանդաղ ընթանալը՝ շինարար:

* * *

Ո՛չ մի նպատակ ինքն իրեն դեռ երբեք չի
արդարացրել:



Այստեղ ո՛չ մի **փառք** չկան. պետք չէ՛ իրարու խաբել,
խաբվել այդ կեղծիքով: Փառքն Այնտեղ է, այնտեղ է
«որոշվում» քո փառքը...

* * *

Իսկական, ճշմարիտ Փառքն Աստուծով, նրա առջև
«փառավորվելն» է...

* * *

Իմ «փառքն» այն է ..., որ ես չեմ ձանաչում և ո՛չ մի
փառք:



Շտապելս էլ պետք է հանդարտ լինի:

* * *

Շտապողը նախօրոք դատապարտված է...

* * *

Որքան շատ շտապես, այնքան ո՛ւշ կհասնես:

* * *

Վազելիս, այնպէն վազիր, ասես՝ քայլում ես, իսկ
քայլելիս, այնպէն քայլիր, ասես՝ վազում ես:



Տվողը «հարուստ» է, վերցնողը՝ «աղքատ»:

* * *

Ով տալիս է՝ ստանում է, ո՛վ վերցնում է՝ կորցնում է:

* * *

Տո՛ւր դիմացինիդ այն, ինչը չես «ուզում» տալ և մի՛ տուր այն, ինչը «ուզում» ես...

* * *

Մեկ պարտք տա՛լն է վատ բան, մեկ էլ՝ պարտք վերցնե՛լը, իսկ պարտքն ստանալը և վերադարձնելը լա՛վ բան է:



Յուրաքանչյուր **ազգ** ունի իր ուրույն մշակույթը, և
միայն ֆրանսիացի ազգն է, որը կրում է նաև
Համամարդկային «մշակույթի ոգին»:

* * *

Աշխարհում միայն հայ ազգն է, որը կրելով «մշակույթի
ոգեղենությունը», միաժամանակ չի գիտակցում այդ
բացառիկ կարևոր իրողությունը, ուստի և իր օգտին չի
ծառայեցնում այն, այլ անփութորեն նվիրաբերում է
ուրիշներին...

* * *

Մինչև հայը դուրս չգա իր «Ես»-ի մաշկից, «բան»
դուրս չի գա...

* * *

Միամիտ ժողովրդի առաջնորդը միշտ սրիկա է լինում,
իսկ խելացի ժողովրդիներ՝ միշտ առաքինի:

* * *

Բոլորին ներել եմ, ներում եմ ու կներեմ, սակայն՝
«թուրքին»՝ չեմ ներում ու չեմ ներելու...



Բարոյագիտութիւնը՝ **քարոյականութեան**
գեղագիտութիւնն է:

* * *

Մաքուր խիղճը բերկրալի երանութեան անհատնում
աղբյուր է:

* * *

Քաղաքավարի մարդը քաղաքացի է, իսկ
քաղաքակիրթ մարդը՝ ավելին, քան քաղաքացի...

* * *

Ազնվականը ազնվութեամբ է ապացուցում իր
ազնվագարմութիւնը:

* * *

Ինչպէս որ սիրտդ մղկտում է, երբ քեզ հանիրավի
անարգում են, ձիշտ այդպէս էլ թող տրորվի քո սիրտը
նաև, երբ ուրիշին են անարգում:

* * *

Իզուր մի՛ ջանացեք թաքցնել ձեր արարքներն ու
նկրտումները՝ վարագույրի ետևում, վասն զի շղարշի
պես թափանցիկ է այն:

* * *

Հրաժարվել կա, որ ուրացում է, հրաժարվել էլ կա՝
արարում է:

* * *

Կորած է նա, ով կորցրել է ամոթն ու
արժանապատվությունը:

* * *

Երբեմն ես ափսոսում եմ, որ շատ հաճախ
«մարգարիտներ եմ շաղ տվել» տխմարների,
նենգամիտների՝ անարժանների առջև... Գիտեմ, որ
բարեպաշտ «գերքրիստոնյան» կասի. «Բան չկա, լավ
ես արել. լավություն ես արել՝ ջուրն ես գցել... մի օր
ետ կգա»: Ո՛հ, ես համաձայն չեմ. այդ ջուրը հոսում է,
ցավոք, նենգամիտների ջրանցքով՝ ուղիղ դեպի իրենց
անապատացած նախկին ձահձատեղին՝ այն
վերակենդանացնելու համար: Բայց դա իզուր է,
որովհետև անապատացած ձահիձը՝ ջրվելուց հետո,
նորից կձահձանա... Ուրիշ ոչինչ:

* * *

Երբ անարժանը արժանավորից պաշտոն է «գողանում», դառնում է այդ պաշտոնի հավերժական ստրուկը, իսկ արժանավորը դրանից էլ ավելի է ազատագրվում...

* * *

Այ՛ Աշխարհ, այդ ինչո՞ւ ես արժանավորներին տանում «անդրաշխարհ», իսկ անարժաններին՝ թողնում «այսրաշխարհում», այ՛ տխմար Աշխարհ...

* * *

Այլևս չեմ տրտմելու «անարժանների» դավաճանության պատճառով, վշտանալու եմ միայն «արժանավորներին» պատուհասող չարիքի համար:



Հումորը ամենակարևոր վիտամինն է:

* * *

Բանաստեղծությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ՝
«Երաժշտականացած» արձակ...

* * *

Շնչելիս մի՛ կուլ տա, կուլ տալիս մի՛ շնչիր:

* * *

Որքան շատ նայես, այնքան շուտ կտեսնես...

* * *

Երեսպաշտությունը միշտ քողարկվում է պերձաշուք
ձառերով:

* * *

Եսասիրությունը ինքնասիրության հիվանդություն է:
(Եսասիրությունը հիվանդացած ինքնասիրությունն է):

* * *

Ժլատությունը թույն է, որն աննկատ ու
անդառնալիորեն քայքայում է մարդու ոգին և
այլասերում հոգին:

* * *

Քծնանքն ու վիրավորանքը նույն դրամի տարբեր
երեսներն են:

* * *

Համառությունը երկու աղբյուրից է սնվում. մեկը՝ այն,
որ պղտոր է, մորթապաշտությունն է, իսկ մյուսը՝
վճիտը, արդարամտությունն է:

* * *

Կախում կա՝ ստրկություն է, կախում կա՝ նվիրում է:

* * *

Գիտեմ Մեկին, ով, անվերջ կուրծք ծեծելով, խոսում է
ժողովրդի կարիքների մասին, սակայն բնավ չի սիրում
մարդկանց, խոսում է ազգի շահերի մասին, սակայն
բնավ չի հարգում մարդուն... Եվ ասեմ, որ Նա
ամենևին էլ «մենակ» չէ այս աշխարհում:

* * *

Լինել... ասել... անել...

* * *

Ա՛խ, թներ. ո՛ր եք դուք, թներ...

* * *

Լճիս տվեք ինձ, որ ջերմացնեմ աշխարհը:

* * *

Բարին անսահման է, Չարը՝ վերջավոր:

* * *

Ի սկզբանե Հայն էր, հետո՝ Բանը, և այնուհետև՝
մնացյալ բաները...

ՍԵՐԳԵՅ ԱՐՏԱՆԵՍԻ ՄԿՐՏՉՅԱՆ

333

ԱՍՈՒՅԹ

Հրատ. խմբագիր՝ Վահան Վարդանյան
Ձևավորումը՝ Կարեն Մկրտչյանի
Սրբագրիչ՝ Արմեն Ավանեսյան

Տպագրությունը՝ օֆսեթ
Չափսը՝ 70x100 1/32
Ծավալը 2,25 տպ. մամուլ:



ԳՐԱԿԱՆ ԷՏԱԼՈՆ հրատարակչություն

375010, Երևան, Թումանյան 10, բն. 34
հեռ.՝ 58-03-15
Էլ. փոստ՝ Narcis-handes@mail.ru

